Հարգելի պ-ն Ալեքսանյան,
ստորև ներկայացնում ենք Որակի ապահովման կենտրոնի **2021թ. աշնանային** գնումների հայտը:

# ԳՆՄԱՆ ՀԱՅՏ

| Հ/Հ | Ապրանքի, Աշխատանքի կամ Ծառայության անվանում | չ/մ | Քանակ | Գինը, հազար ՀՀ դրամ | Տեխնիկական բնութագրերը/պահանջները |
|---|---|---|---|---|---|
| 1. | ERASMUS+ CBHE 585760 “PRINTeL” նախագծի (www.printel.am / 15.10.2017թ.-15.10.2021թ.) արդյունքների արտաքին գնահատման ծառայության գնում | հատ | 1 | 1 600 | **Կատարվելիք աշխատանքները.**<br>– գնահատել նախագծի արդյունքներն ըստ նախագծի պլանի,<br>– գնահատել նախագծի ազդեցությունն ինստիտուցիոնալ մակարդակում՝ ըստ նախատեսված խնդիրների,<br>– գնահատել նախագծի կայունությունը/շարունակա-կանությունն ինստիտուցիոնալ մակարդակում,<br>– պատրաստել նախագծի արդյունքները ներկայացնող զեկույց՝ զուգորդված համապատասխան առաջարկու-թյուններով, հետագա դիտարկման համար:<br>**Պահանջվող կարողությունները.**<br>– դասավանդման և ուսումնառության ժամանակակից նորարարական մեթոդների իմացություն,<br>– ԵՄ նախագծերին, այդ թվում՝ Erasmus+ CBHE նախագծերին մասնակցություն, որոնց գնահատման փորձը կդիտվի որպես առավելություն,<br>– Անգլերենի գերազանց իմացություն՝ հաստատված համապատասխան փորձով,<br>– Նախագծերի ղեկավարման և որակի ապահովման փորձառություն:<br>**Լրացուցիչ պահանջներ.**<br>– ծանոթություն ERASMUS+ CBHE նախագծերի իրականացման ուղեցույցի պայմաններին՝ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ներկայացված հետևյալ փաստաթղթում. http://printel.am/uploads/page/pdf_en/Guidelines%20for%20the%20Use%20of%20the%20Grant_09.01.2018.pdf :<br>**Ակնկալվող արդյունք.**<br>– նախագծի անկախ գնահատման զեկույց/ հաշվետվություն:<br>**Վայրը և տևողությունը.**<br>– աշխատանքը կատարվում է Երևանի պետական համալսարանում (ԵՊՀ), նաև առցանց՝ շահառու մյուս 8 բուհերի (Հայաստան, Վրաստան, Բելառուս) հետ էլեկտրոնային կապի օգնությամբ,<br>– աշխատանքի սկիզբը՝ 10 սեպտեմբեր 2021թ.,<br>– զեկույցի ներկայացման վերջնաժամկետը՝ 10 հոկտեմբեր 2021թ.:<br>**Ներկայացվող փաստաթղթեր.**<br>– Մոտիվացիոն նամակը և CV-ն անգլերենով պետք է ուղարկել հետևյալ էլ. հասցեով՝ abudaghyan@ysu.am : |
| 2. | ERASMUS+ CBHE 585760 “PRINTeL” նախագծի (www.printel.am / 15.10.2017թ.-15.10.2021թ.) ֆինանսական աուդիտի ծառայության գնում | հատ | 1 | 3 200 | **Կատարվելիք աշխատանքները.**<br>–պատրաստել նախագծի փաստացի արդյունքների զեկույց՝ վերջնական ֆինանսական հաշվետվության վերաբերյալ (Report of Factual Findings on the Final Financial Report):<br>**Պահանջվող կարողությունները.**<br>– կազմակերպությունը պետք է ունենա ֆինանսական աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ,<br>– աուդիտ իրականացնող աշխատակիցները պետք է ունենան ֆինանսական աուդիտի իրականացման առնվազն 3 տարվա փորձ,<br>– աուդիտ իրականացնող աշխատակիցները պետք է ունենան առնվազն մեկ ERASMUS+ CBHE նախագծի ֆինանսական աուդիտի իրականացման փորձ,<br>– անգլերենի գերազանց իմացություն՝ հաստատված |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | համապատասխան փորձով,<br>– աուդիտ իրականացնող աշխատակիցները պետք է լավ ծանոթ լինեն ERASMUS+ CBHE նախագծերի ֆինանսական աուդիտի պայմաններին, որոնք ներկայացված են հետևյալ փաստաթղթում. http://printel.am/uploads/page/pdf_en/Financial%20Audit%20Certificate%20Report.pdf ։<br>**Լրացուցիչ պահանջներ.**<br>– աուդիտ իրականացնող աշխատակիցները պետք է ծանոթ լինեն ERASMUS+ CBHE նախագծերի իրականացման ուղեցույցի պայմաններին՝ ներկայացված հետևյալ փաստաթղթում. http://printel.am/uploads/page/pdf_en/Guidelines%20for%20the%20Use%20of%20the%20Grant_09.01.2018.pdf ։<br>**Ակնկալվող արդյունք.**<br>– նախագծի ֆինանսական աուդիտի զեկույց՝ ըստ սահմանված ձևաչափի:<br>**Վայրը և տևողությունը.**<br>– աշխատանքը կատարվում է Երևանի պետական համալսարանում (ԵՊՀ), անհրաժեշտության դեպքում նաև առցանց՝ շահառու մյուս 8 բուհերի (Հայաստան, Վրաստան, Բելառուս) հետ էլեկտրոնային կապի օգնությամբ,<br>– աշխատանքի սկիզբը՝ 25 հոկտեմբեր 2021թ.,<br>– զեկույցի ներկայացման վերջնաժամկետը՝ 25 նոյեմբեր 2021թ.:<br>**Ներկայացվող փաստաթղթեր.**<br>– կազմակերպության պրոֆիլը և աուդիտ իրականացնող աշխատակիցների անգլերեն CV-ները անհրաժեշտ է ուղարկել հետևյալ էլ. հասցեով՝ abudaghyan@ysu.am . |

Համաձայն Եվրոպական հանձնաժողովի և ՀՀ կառավարության միջև 2006թ. կնքված շրջանակային համաձայնագրի 3-րդ հոդվածի՝ Erasmus+ ծրագրի շրջանակներում ծառայությունների ձեռքբերումն ազատվում է բոլոր տեսակի հարկերից (ներառյալ ԱԱՀ) և տուրքերից:

Որակի ապահովման կենտրոնի տնօրեն՝ Ա. Բուդաղյան

*08 ապրիլի 2021թ.*